Արձանագրություն N 10

ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/9 ծածկագրով ՀՀ Գեղարքունիքի մարզի գ. Լեռնահովիտի, ՀՀ Շիրակի մարզի գ. Արեգնադեմի միջնակարգ և ՀՀ Տավուշի մարզի գ. Կիրանցի միջնակարգ դպրոցների տիպային (մոդուլային) շենքերի կառուցման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

12.07.2021թ.
ժամը 15:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Միրզոյան
Հանձնաժողովի անդամներ՝ Դ. Շատվերյան
Ռ. Եղիազարյան
Ար. Գրիգորյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Հարությունյան
Բացակայում էր՝
Հանձնաժողովի անդամ՝ Գ. Գևորգյան

1. ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/9 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 3-րդ չափաբաժնի մասով պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ա. Միրզոյան)

1.1 Քանի որ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 11.06.2021թ. թիվ ԵԴ/33248/02/20 որոշմամբ վերացվել է սույն գործով դատարանի կողմից կիրառված հայցի ապահովման <<արգելել ՀՀ Քաղաքաշինության կոմիտեին ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/9 ծածկագրով բաց մրցույթի 3-րդ չափաբաժնի մասով կնքել պայմանագիր մինչև սույն գործով եզրափակիչ դատական ակտի ուժի մեջ մտնելը>> միջոցը, և այդ որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո՝ 11.07.2021թ. հետո՝ գնահատող հանձնաժողովը որոշում է.

1. ուժը կորցրած ճանաչել սույն գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.12.2020թ. նիստի N 9 արձանագրության 1.2 կետով ընդունված որոշումը,

2. կիրառել սույն գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.11.2020թ. նիստի N 8 արձանագրության 3.1 կետով ընդունված որոշումը և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել <<Ինտերեվրոս-Արգոս>> ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ -4, դեմ -0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------- Ա. Միրզոյան

Անդամ՝ ---------- Դ. Շատվերյան

---------- Ռ. Եղիազարյան

---------- Ար. Գրիգորյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- /Ն. Հարությունյան